

մանր տէրութեանց մէջ ալ, ինչպէս
որ ըսինք, որ երկայն կ'ըլլար հոս մէ-
կիկ մէկիկ դնելը :

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ

‘Արակար բառերու վրայ :

ԱՏ ուսումնասէր անձինք եղան,
աւելի աս իրեք տարուանս մէջ, որ թէ
խօսքով և թէ գրով յորդորեցին ըզ-
մեզ համառօտ բառդիքը մը հանելու,
որուն մէջ դրուած ըլլան ան ամէն
նորաշնար բառերն որ խիստ հարկա-
ւոր են հիմակուան գիտութեանց ու
արհեստից բացատրութեանը համար,
խնդրելով որ ան բառերուն նշա-
նակութիւնը որոշելու համար՝ գաղ-
ղիարէններն ալ անոնց առջելը դը-
րուին : Խղան ոմանք ալ որ աղաքեցին
թէ գոնէ օրագրիս մէջ ուսումնական
բառեր որ կը գործածենք, անոնց գի-
մացը՝ կամծանօթութեան պէս՝ գաղ-
ղիարէններն ալ դնենք, ինչպէս որ
շատ անգամ ալ կ'ընենք : Այսպիսի
իրաւացի խնդիրքը պէտք էր որ ըստ
կարի շուտով կատարել ջանայինք .
բայց մեր չափաւորութեանը ձեռք չէր
տար որ այսպիսի բառարան մը հա-
նելով՝ կերպով մը կանոնագիր ըլլանք
լեզուին, ու իբր թէ ուսումնական
անիշխանութեան մը մէջ գտնուելով
ուզած բառերնիս որոշենք վեր 'ի վե-
րոյ մտածութեամբ, կամ առանձնա-
կան կարծիքներով, ինչպէս որ ըրին
ատենով՝ Ա արդան Հունանեանին
պէս, Հակոբ Հոլովին պէս, Բարսե-
ղին պէս, Ասկանայ պէս բարեմիտ՝
տգէտ ու յանդուգն մարդիկ, ու մեր
գրաբառ լեզուն որ արդէն ընկած էր՝
բարբարոսական բառերով ու ոձերով
լեցուցին : Բայց հիմա աւելի ստիպուե-
լով զանազան անձանցմէ ու այլեայլ
պատճառներէ, ահա կը պատրաստենք
համառօտ բառարան մը նորաշնար
ուսումնական և արհեստական բառե-
րու, ամէն մէկուն վրայ ուրիշներու

հետալխորհրդակցելով, ու լաւ երե-
ցածընտրելով . միայն որովհետեւ հե-
ռու է մեզմէ ան պահանջմունքն որ
մենք ըլլանք պատգամախօս այսպիսի
ծանր նիւթերու մէջ, ահա հիմա-
կուընէ կ'իմացընենք որ մեր աս կամ
ան բառը որոշելուն պատճառները
հասկընալէն ետեւ, ամէն մարդ ազատ
է անոնք գործածելու, կամ անոնց
տեղու իրեն լաւագոյն երեցած բառե-
րը գնելու : Խակ թէ մենք աս բառե-
րը ինչ պատճառաւ ու ինչ կանոնով
կ'որոշենք, հարկ կը համարինք հոս
համառօտ կերպով մը ծանուցանել :

Քանի որ մարդուս խելքը կը բա-
ցուի, իր լեզուն ալ կը զարդարուի .
որչափ որ մտքին մէջի գաղափարները
շատնան, այնչափ լեզուին բառերն
ալ կ'աւելնան . որչափ որ միտքը բա-
րակնայ, այնչափ ալ բառերուն նշա-
նակութիւնները կ'աւելնան : Այս բա-
նիս առաջին պարզ օրինակը ունինք
նոր լեզու ելլող տղոց վրայ, որ իրենց
մօրն ու հօրը անունները սորվելէն կը
սկսին, ու ինչուան որ ծերանան՝ նոր
նոր բառեր կը սորվին : ‘Այն բանը կը
տեսնենք վայրենի ազգաց լեզունե-
րուն վրայ, որ բոլորը տասը հազար
կամ շատ շատ՝ քսան հազար բառ հա-
զիւ ունին : Աւելի ալ յայտնի ու մեծ
օրինակ են մեզի հին ատենի ծաղկած
լեզուները . որ որչափ ալ ատենով
ծաղկած ըլլան մատենագրութեամբ,
միշտ աղքատ կը համարուին նոր գա-
ղափարներ բացատրելու կողմանէ :
Բաելէ թէ ո՞ր և իցէ լեզու քանի որ
իր առջի հնութեանն ու չափաւորու-
թեանը մէջ մնայ՝ անկարելի է որ
հետ զհետէ ելած նորանոր ուսմանց,
նորանոր արհեստից, գործիքներու,
հանքերու, բոյսերու, կենդանինե-
րու անունները ունենայ . ասով կ'իմա-
ցուի թէ մեր նոր տպուած հայկազ-
նեան բառարանին մէջի բառերովը
(որ գրեթէ ութսուն հազարի չափ
են) անկարելի է որ մէկը հիմակուան
գիտութիւնները ու արհեստները կա-
րենայ բացատրել . գէթ քսան հա-

զարնոր բառի կարօտ է որ անոնցմով
իր միտքը հասկըցընէ կարդացողին :
Այսափին վրայ ամենելին տարակոյս
չկայ . և ոչ միայն գործնական փոր-
ձով, հապա նաև Խւրոպայի ամէն
հին և նոր լեզուներուն վրայ կը տես-
նենք ասոր ապացոյցը :

Ի՞անը աս է թէ ատ քսան հազարի
չափ նոր բառերն որ ըսինք՝ ուսկից
առնելու է կամբնչպէս հնարելու է :
Ուշ որ մեր բուն լեզուն աշխարհա-
բառն ըլլար, ու ամէն գիրք անով շա-
րադրելու ըլլայինք (որ և ոչ մտքէ
անցընելու բան է), թէրեւս դիւրին
ըլլար բառ հնարելը կամուրիշ լեզու-
ներէ փոխ առնելը . բայց անանկ չէ .
մեր բուն լեզուն գրաբառն է, ան
պատուական ու հարուստ լեզուն՝ ո-
րով մեր ազգը ազգ է, ու իրաւամբ
կը պարծի նաև օտարաց առջելը . ու-
րեմն որչափ զգուշութեամք, որչափ
երկիւղածութեամք պիտի աւելցընէ
մէկը գրաբառին վրայ ան նոր բա-
ռերն որ ապականիչ և խանգարիչ լե-
զուի չուլայ, ինչպէս որ վերոյիշեալ
միամիտ հեղինակներուն ըղեղովը շար-
ժողները եղան ու կրնան ըլլալ :

Ոմանք կ'ըսեն թէ որ և իցէ նորե-
լուկ բանի մը օտար ազգերը ինչ ա-
նուն որ կուտան՝ մենք ալ թէ որ կա-
րելի է անիկայ գործածենք, միայն
թէ տառադարձութեան կանոնը պա-
հենք . և ասոնք իրենց կարծիքը հաս-
տատելու համար՝ մեր նախնեաց
թարգմանութիւններէն օրինակ կը
բերեն . վասն զի կ'ըսեն ահա մեր
նախնիք ալ Յունաց՝ Պարսից՝ Խ-
րբայեցւոց և ուրիշ ազգաց բառերը
տառադարձութեամք առեր գործա-
ծեր են . ինչպէս սովոր, սովորութիւն,
պոռեպ, այեր, դիրագմայ, դիալիէ, սիդ-
նոն, դիւսիւթան, դիշիսովոս, տարուշան,
մզէլը կամ մովիլ, մալում, ուսպապապ,
պոռագմբոննեկ և այլն : — Այս կարծիքը
նախնեաց օրինակովը որչափ աչք խա-
բող է, այնչափ ըստ ինքեան անձու-
նի այլանդակ է, ու աւելի ալ այլան-
դակ հետեանքներու պատճառ է :

Ա ամ զի նախ՝ ով կրնայ ըսել թէ
մեր նախնեաց ամէն ըրածը շատ ա-
ղէկ շատ գովելի բան է, ու անոր կոյր
զկուրայն հետեւելու է . ով ըսեր կամ
չկրնար ըսել թէ աս նիւթիս մէջ ա-
ւելի լաւ կ'ընէին մեր նախնիք՝ թէ
որ ըստ կարի հայու բառեր դնէին
ատոնց տեղը, ինչպէս որ շատն ալ
դրեր են, այսինքն գիրք կամ մատեան,
էմաստակ, բանաստեղծ, օդ, երէրամէան,
կտակ, նշան, բնագէտ կամ բնախօս և այլն :
Խւ անշուշտ կը դնէին, ու վերոյի-
շեալ բառերէն ետ կը կենային, թէ
որ առաջուց գուշակէին թէ իրենց
օրինակը որչափ չարեաց պատճառ
կրնայ ըլլալ մեր լեզուին ատենով,
մանաւանդ հիմա, ան ալ՝ առանց
նախնեաց կանոններն ու պատճառ-
ները գիտնալու՝ տառադարձութիւն
ընելով : Ա ամ զի, օրինակի համար,
նախնեաց հետեւիմ ըսելով՝ մէկը ատ
կանոնին կրնայ մտիկ ընել, ու հիմա
սովորական եղած լոգիաւ բառին տե-
ղը յունարէն ուրօսաքօօ (դիրոսաքօօ)
բառը պիւրոսիագոս գործածել . կամ թէ
լատիններէն նարօ (լատու) բառը բա-
րոր կամ լապոր . կամ գաղղիարէն բա-
տեաս և նարեց (պաթօ և վագէտ) բառը
գնէ բառոյ և լապէտ . կամ գերմանե-
րէն dampfschiff (տամֆիշիֆ) բառը
առնու ընէ դամպիսրէ . կամ թէ ա-
ւելի նեղը մտնէ նէ՝ Խուսաց ուրօխու-
(դասութան) բառը առնէ՝ ըսէ պարու-
րոս, պարութեայ, պարութեաւ և այլն :
Խըկրորդ, աս կերպով օտարազգի բա-
ռեր գործածելը մեր նախնիք շատ
անգամ ակամայ կամօք գործածեր են
ըսելու ամեննեին չենք տարակուսիր .
վասն զի իրենց ատենը կարգաւորեալ
բառգիրք չգտնութիւլը, յունական կամ
եբրայական բառերուն ձիշդ նշանա-
կութիւնը յայտնի ըլլալը, և ասոնց
նման ուրիշ շատ պատճառներ կրնան
ըլլալ որ մենք չենք գիտեր . և քանի
որ առանց մէկը բառնին պատճառը գիտ-
նալու՝ ելենք անոր հետեւինք, իմաս-
տակութեան ու ծանծաղամտութեան
անունը յանձն պիտի առնենք : Ուրեմն

աս կարծիքը շտկէ շիտակ առնելէն պէտք է սաստիկ զգուշանալ. այսինքն օտար լեզուներէ պէտք չէ բառ առնել՝ ոչնոյն հնչմամբ և ոչ տառադարձութեամբ, որ շատ ծաղրական բան է. հապա անոնց տեղը որչափ որ հարելի է մեր լեզուին յատկութեանցը յարմար կանոնով վայելուչ բարդ բառեր պէտք է շինել, և աղէկ ընտրութեամբ ու բազմաց հաւանութեամբ անոնք բանեցրնել: Որչափ որ հարելի է ըսինք, վասն զի բառեր ալ կան որ առանց կարդացողներուն միտքը շփոթելու չենք կրնար փոփոխել, ու ներհական մոլորութեան մէջ իյնալով՝ ասոնք օտարազգի բառեր են ըսել ու մէկդի ձգել, անոնց տեղը անյատուկ անյարմար բառեր դնել. ասանկ են էակ, որ հոլանտացւոց լեզուով ոգի կամ հոգի ըսել է. զի՞ն կամ զի՞ն որ մետաղ մըն է. պահան, որ հոնդկաստանի ծառ մըն է, և այլն: Ի՞այց այսպիսի բառեր՝ որ ամեն ազգաց մէջ ալնոյն ըլլան՝ խիստ շատ չեն:

Ոմանք ալ ուրիշ հնարք մը կը սորվեցընեն՝ նոր բառ շինելէն կամ օտարազգի բառերը թարգմանելէն և անոնք գործածելէն ազատելու համար: Ութսուն հազար բառ ունինք կ'ըսեն մեր լեզուին մէջ. եկուր ասոնց վրայ նոր բառ աւելցընելուն տեղը՝ ասոնք ալ պակսեցընենք. — ինչպէս. — ընտրենք մէջէն միայն ան բառերն որ ամենէն հին կը համարուին, որ անշուշտ քսան հազարի չափ կ'ելլեն, ու ասոնց նշանակութիւնները շատցընենք. օրինակի համար, աղդ բառը ունինք որ յունական յնուած բառին տեղը դրուած է նախնեաց հին գրուածքներուն մէջ, ու բառարանէն ալ կը տեսնուի որ գրեթէ տասուերկու տեսակ նշանակութիւն ունի. տասուերկուք մըն ալ մենք աւելցընենք, որչափ վաստակ կ'ընենք. վասն զի ան ատենը դուրս կը ձգենք բառգրքէն այսպիսի բառերը, տոհմ, ցեղ, սէրունդ, ժողովորդ, սէու, աղն, տեսակ, ճեռ, հարդ, դաս,

ու ամենուն տեղը աղդ բառը գործածենք: — Ինչո՞ւ: — Ա ամ զի մեր նախնիք յնուած բառը աւելի աղդ թարգմաներ են: — Ես կարծիքս ալ կոյր զկուրայն պաշտաղին առջի վաստակը ան է՝ որ իրեն խօսածը կամ գրածը ինքը միայն կը հասկընայ. երկրորդ վաստակն ալան է որ լսողին կամ կարդացողին առջելը ծաղրելի ու արհամարհելի կ'ըլլայ: Ա ասն զի նախ՝ լեզուին մէջ նոր բառ աւելցընելը, և հին բառի մը վրայ նոր նշանակութիւն դնելը նոյնպէս վնասակար է լեզուին. մանաւանդ թէ նոր նշանակութիւն աւելցընելը աւելի մեծ վնաս կ'ընէ քան թէ նոր բառ շինելը. ինչու որ նոր բառը ինքիրմէ ալ կրնայ Ճանչցուիլթէ նոր է, ինչպէս նաև իր նշանակած բանը. բայց նոր նշանակութիւնը այնպէս դիւրաւ լիմացուելով՝ լեզուին հոգին կը փացընէ ու կ'ապականէ: Երկրորդ, Ճմարիտ չէ ան խօսքը թէ մեր հին նախնիք Քունաց յնուած բառը միշտ աղդ թարգմաներ են, ուստի յունարկնը որչափ նշանակութիւն որ ունի՝ հայերէնին ալ կրնանք տալ: Ա ասն զի նոյն խսկ Լստուածացընին թարգմանիչները մի և նոյն յունական բառը ինչուան քսան տեսակ իրարմէ տարբեր բառերով թարգմաներ են հայերէն, խօսքերուն իմաստին նայելով՝ քան թէ՝ բառերուն կապուելով. և ահա ատ յնուած բառն ալ սուրբ գրոց մէջ թէպէտ սովորաբար աղդ թարգմաներ են, բայց երկու տեղ ալ տոհմ թարգմանուած է, մէկտեղ մը հարդ, մէկ ուրիշ տեղ մըն ալ աղդէ աղդէ:

Երրորդ, որ և իցէ լեզուի մէջ՝ բառերը իմաստին պիտի ծառայեն, և ոչ իմաստը բառերուն. ուրեմն որչափ որ կարելի է՝ որ և իցէ բառերուն նշանակութիւնները պիտի նայինք որ Ճշգենք, և ոչ թէ Ճապաղենք ու ընդարձակենք. և ասոր համար շատ փափաքելի է որ օր մը առաջ լմըննայ համանուանց բառարանը որ շինուելու վրայ է: Ես Ճշգութիւնը աւելի ալ

Հարկաւոր է ուսումնական բառերուն նշանակութիւնը որոշելու համար, որպէս զի իմաստի շփոթութիւն ու հօմաձայնութիւն ըլլայ խօսքին մէջ։ Արդկային գիտութեան ամէն մէկ մեծ ու պատիկ ձիւղերը պէտք է իրենց սեպհական ու յատուկ բառերն ունենան, որպէս զի թէ վարժապետը կարենայ աշակերտին իր միտքը դիւրաւ հասկըցընել, և թէ աշակերտը վարժապետին խօսքերը հասկընալ։ Բաղդ ունինք որ աս բանիս ալ գործնական կանոնը դրեր են առջենիս մեր երանաշնորհ թարգմանիչները նոյն իսկ աստուածաշնչին թարգմանութեանը մէջ, և ուրիշ կանոնական և ուսումնական գրուածքներու մէջ։ Ասն զի յայտնի կ'երենայ թէ իրենք պատմական, ճարտասանական ու բանաստեղծական գրուածքներ թարգմանելու ատեն ուրիշ ոճ՝ բռներ են, իսկ ուսումնական գրքերու թարգմանութեանցը մէջ՝ ուրիշ։ Աստուածաշնչին մէջ միշտ նայեր են թէ իրենց թարգմանելու իմաստին աս կամ ան յունական բառը՝ ան տեղին յարմար ինչ նշանակութիւն ունի, և անոր համեմատ բառ մը դրեր են հայերէն, և ոչ երբեք իրենք զիրենք պարտաւորեր են որ աս յունական բառին միշտ աս հայերէնը դնեն, ինչպէս որ ըսինք. և աս է գլխաւոր պատճառը՝ որով մեր աստուածաշնչին թարգմանութիւնը ուրիշ թարգմանութիւններէն շատ վեր է։ Իսկ օրինական, կանոնական և ուսումնական գրքեր թարգմանելու ատեն՝ այնչափ ձգութիւն կրփնաւեն ու կը պահեն, որ շատ գեղեցիկ բառեր՝ միայն ան տեսակ գրուածքներու սեպհականեր են. զոր օրինակ որակ, քանակ, սեռ, տեսակ, գաղափար, մակդիր, գումար, անուն, գերանուն, բայ, մակրայ, շաղկապ, բառ, տրամաբանութիւն, տրամախօսութիւն, պարբերութիւն, ոճ, կանոն, սահման և այլն։

Աւ ասոնց մէջ աս ձգութիւնն ալ ըրեր են, որ յունական նոյն բառը

հայերէն ալ միշտ նոյնպէս թարգմաներ են։ Այնչափ հարկաւոր ճանցեր են իրենք աս ձգութիւնը, որ թէպէտ և մեզմէ շատ աղեկ գիտեն եղեր հայերէնին յատկութիւնները (վասն զի հինգերորդ ու վեցերորդ դարուն մէջն են եղեր, և ոչ մեզի պէս տասուիրեք տասնընորս դար հեռու), և սակայն ձգութեան սիրոյն համար հարկադրուեր են երբեմն ինչուան չափն ալ անցընել, ու իմաստն ալքուլովին հելենաբան ընել։ Ասորյայտնի օրինակ են Պատուասիոսի թրակացոյն հայերէն թարգմանուած քերականութիւր, և Արիստոտելի գրքերը որ Պատիթ անյաղթը թարգմաներ է։

Այն իսկ գերականութիւն բառը օրինակ ըլլայ մեզի։ Ամենքն ալ գիտեն թէ ասիկայ յունարէն ցրամբաւուակի բառին թարգմանութիւնն է, որ աստուածաշնչին մէջ ըլլար նէ՝ թերեւս մերոնք թարգմանէին դպրութիւնն, գիր, գրականութիւնն, գրաւորականութիւնն, կամ գրական, գրաւոր և այլն. բայց մեր նախնիք սեպհականեր են գերականութիւն բառը ան ուսման՝ որ ինչուան հիմա ալ՝ բաց ՚ի Պերմանացւոց գրեթէ ամէն Աւրոպացիք grammatica կ'անուանեն։

Ինչուան հիմա ըսածներէս կ'իմացուի թէ մենք ինչ կանոնով պիտի շարժինք աս նիւթիս մէջ. այսինքն թէ Ա. Պիտք է որ ուսումնական վայելուչ ու ձիշդ բառերն որ ունինք ՚ի նախնեաց, անոնք բանեցընենք։ Բ. Ան բառերն որ չունինք, թէ որ յունարէն բարդութեան նմանը կը նանք վայելուչ կերպով հայերէն բարդել մեր նախնեաց ոճին հետեւելով, անկէ աղեկը չկայ. զոր օրինակ Քիստօլոցիա բառին կ'ըսենք բնախօսութիւն։ Կմանապէս թէ որ օտարազգի բառը որոշնշանակութիւն մը ունեցող բառէ, վայելուչ կերպով թարգմանելու է. զոր օրինակ յունարէնէ ելած րցրե բառը կրնանք թարգմանել կը կամ հրային գար, որով կը հասկը.

յուի պղնձի և ծծմբոյ բնական բաղադրութիւն մը : Դ . ՈՒԵ որ բարդութեամբ կամ վայելուչ բազադրութեամբ թարգմանել չենք կը ըրնար , խոհեմ զգուշաւորութեամբ պէտք է ածանց մը կամ բաղադրեալ բառ մը կազմենք՝ արմատը բուն լեզուին առնելով . զոր օրինակ աշխատա բառին կ'ըսենք Գրահաշիւ : Դ . ՈՒԵ որ թարգմանելը ան կարելի ըլլայ , և ոչ վայելուչ կերպով բառ յարմարցընելը , ան ատենը նոր լեզուներէ կը ընանք առնել , առանց տառադարձութեան՝ նոյն հնչմունքը պահելով . զոր օրինակ Խակուէ , շատար , չայ , պայ , թիա , դրու և այլն :

Եւ ահա աս կանոններով կը պատրաստուի հիմա նոր համառօտ բառարան մը ամենայն նոր արհետից , գիտութեանց , սովորութեանց ևն , խորհրդով և հաւանութեամբ բազմութեան լեզուագէտ ու հայերէնագէտ անձանց :

Հայց հոս նորէն բովանդակել ու հաստատել ուզելով ինչուան հիմա ըսածնիս , Առաւելի տրամաբանութեամբ ամենաճշմարիտ խօսքերը մէջ բերենք .

Պէտք և պիտութիւն բառից :

Դ . ՈՒ խօսին՝ ապագէն կամ իմանալի լինել ... ապա զգուշալի է յամենայն ազօտ , երկդիմի , տարամէ աննշան բառից ... և յորժամուշը ըստ արժանի տեղեակ իցեմք իրին կամ բառին , հրաժեշտ 'ի խօսից տալ , քան անկարգ և անհետեղ ճամարտակէլ ըստ քիմն :

Դ . Բառք որոց 'ի հասարակաց պէտս սահմանեալ և հաստատուն է նշանակութիւն , 'ի նոյն միտս պարտ է առնուլ զնոսա . զի չեմք իշխան փոփոխել զառումն այնից , և զհաց գինի ասել և զդինի հաց : Խակ որոց 'ի հասարակաց սովորութենէ չիք աներկայ և յայտնի զօրութիւն , այլ ոմն յայս միտս տանի և ոմն յայն , և 'ի նմին միտս՝ են որ լայնեն և են որ նրբեն , որպէս առնի 'ի բազում ձայնս իմացական և բարցական էակաց , այնպիսին սահմանեցին յառաջագոյն կամ 'ի վարելն անդ , զի յայտնի կացցէ ամենեցուն թէ յոր միտս ճշգէմք :

Դ . Այդ հարկ առաւելէ , յորժամ պիտոյ լից ճարտարել նոր բառու 'ի նշան նորոյ գաղափարի , կամ 'ի գործ ածել ձայնս անծանօթս լսելեացն : Եթէ այսպէս և եթէ այն , ամենեցուն յայտն է թէ որում կամք են հասկացուցանել զմիտս իւր , հարկ անհրաժեշտ է բացայացել ճշգրտիւ զձայնս :

ԱՅԼ յառաջնում պայմանին , մինչեւ ստեղծեալ զնոր ձայնն՝ տեսանել արժան է , թէ գուցէ արգեզք 'ի լեզուի անդ բառ կը բոլոյ գաղափարին . զի ստէպ լինի առ անհմտութեան իրաց կամ լեզուի 'նոր կարծել բազում գաղափարս հինաւուց . կամ նորաձայնս մուծանել յանհնարին ծանրութիւն լեզուին և ունկնդրին , փոխանակ զի 'ի նոյն միտս քաջադիպագոյնք վաղուց առ ձեռն են * :

* Եթէ արդարե նոր իրքն և գաղափարքն իցեն , և նորոց բառից պէտք , փոյթ լիցի այնուհետեւ ըստ կարի հանել յարմատոց լեզուին , և յերիւրել ըստ բնութեան և յատկութեան նորա , կամ 'ի գաւառական խօսից աշխարհին : Խսկ և 'ի սոցա պակասէլ , եթէ յօտար բարբառոց առնուլ ինչ ոք սահպեսի , լւա համարիմք հայոյն , զի զմերան ասասցուք , արտաքոյ հայերէն խօսից 'ի պարսից առնուլ կամ 'ի հելենականէն . զի պարսիայինն դրացի է մերումն և առու արեան , և հելենն առ այնու զի վասն բառիցն բարդութեան դիւրաթարգմանելի է 'ի մերս , նա և յարուեսսու և 'ի գիտութիւնս արդէն խսկ յաճախեալ է : Ոչ կամփէ արգելու 'ի սպառ , եթէ հարկն տագնապեսցէ , և յարդի լեզուաց առնուլ . բայց և զգոյշ լինել մի առ հեղութենէ ինչ , անհմտաբար և ստամբակերէն նորասիրութեամբ կամ հետեղութեան և սորկաբար նմանողութեամբ կամ հետեղութեան խթել և խծկել ինչ և բանազբօսէլ 'ի բարբառս մեր առանց հարկի , զի մի ազգասեր լեզուասիրացն և 'ի հարկին կապեսցին ձեռք առ զգուշութեան : Յերկրորդ պայմանին զգուշալի է յօտար և յանհանութ ձայնից , երբ տեղին չպահանջէ յայտնապէս . զի մերկ գլուով յանդուգն իմաստակութիւն է յօյն և տաձիկ և լատինի խառնելի բանս , ուր 'ի հայումն ոչ պակասեն հաւասարազօր ձայնք . կամ վեր 'ի վայրի յածաշուխոնդմատիր յուղափնդիր լինել 'ի բառարանն թափ առեալ թարթափեալ զհետխորթնի և բորբոսեալ և ժանդահար բառից , մինչդեռ յստակէն և սովորականք և վայելուցք անդէն առ կուան կայցեն :

Դ . Ցայլաբանեալ բառու և յամենայն խսկ ճարտարիսականս բազում զգուշութիւն պիտի , մանաւանդ յիմաստասիրական բանի . զի բաց յորոց ընտելքն են և անվտանդ 'ի մոլորութենէ ... այլքն՝ որպէս մեսապք բազում ուրեք չեն աներկեան :

Բովանդակ ասել , մի երբէք մոռասցի թէ կամք խօսողին այն պարտի լինել , զի ամենայն փութով և յստակութեամբ և ճշգրտութեամբ իմացուացէ ըստ կարի զմիտսն . ուստի և յամենայն ժամինդրելի են և վարելի 'ի գոյն պէտս յարմարագոյնք և քաջադէմք 'ի բառից , մանաւանդ առ իմաստասէրան : Եւ որ ամօթ ոչ իցէ առն իմաստասիրի , որ չգիտից կամ չկամ չկամփից ըստ կարդի թարգմանել զմիտս իւր : « Թանդարք և խոհակերք , գերձիկիք , գործառքը և ամենայն ձեռահմուտ արուեստագէտք , ասէ լոք , հասկանան ամենեքեան զմիտս իւրեաց , առնեն և կատարեն զցործս իւրեանց . միայն իմաստասէմք և բանակախւք ոչ գիտացեն երբէք լսել միմեանց և 'ի գլուփս հանել զիւրեանցն » : Գանդատ ծանր . այլ եղուկ զի առ ոմանս յոյժ է արդարացի :